

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԱՌՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՈՂՈՍԱՍՏԱՆԻ ԴԱՃՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԱՌՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ ՀԱՌԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ

ՊԱՆՊԱՆՍՏԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

ՀԱՄԱԳՈՐԾՄԱՑԵԼՈՒ ԵՎ ՓՈԽԱՌԱՐՁ

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՅՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության կառավարությունը, որոնք այսուհետեւ կանվանվեն «Կողմեր», ելնելով հարկային օրենսդրության պահպանման հարցերում միջազգային համագործակցության եւ փոխօգնության կարեւորությունից եւ ցանկանալով այդ նպատակով միմյանց ցույց տալ հնարավորին չափ լայն աջակցություն, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Տերմինների սահմանումը

Սույն համաձայնագրում կիրառվող տերմինները նշանակում են՝

«հարկային Օրենսդրություն»՝ իրավական նորմերի ամբողջություն, որոնք սահմանում են փվյալ Կողմի տարածքում հարկերի տեսակները եւ դրանց գանձման կարգը ու կարգավորում են հարկային պարտավորությունների առաջացման, փոփոխման եւ դադարեցման հետ կապված հարաբերությունները.

«հարկային Օրենսդրության խախտում»՝ հակաիրավական գործողություն կամ անգործունեություն, որն արտահայտվում է հարկատուի կողմից բյուջեի հանդեպ պարտավորությունները չկատարելու կամ ոչպատշաճ կերպով կատարելու մեջ, որի համար իրավաբանական պատասխանատվություն է սահմանված.

«իրավասու հարկային մարմիններ»՝

Հայաստանի Հանրապետության վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության պետական հարկային ծառայություն.

Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ՝ Ռուսաստանի Դաշնության պետական հարկային ծառայություն.

«հարցապնդող հարկային ծառայություն»՝ այն Կողմի իրավասու հարկային մարմինը, որը աջակցության վերաբերյալ հարցապնդում է անում հարկային հարցերի առթիվ (այսուհետեւ կանվանվի «հարցապնդում աջակցության վերաբերյալ»).

«հարցապնդվող հարկային ծառայություն»՝ այն Կողմի իրավասու հարկային մարմինը, որը ստանում է աջակցության վերաբերյալ հարցապնդում:

Հոդված 2

Համաձայնագրի կիրառման ոլորտը

Կողմերը հարկային իրավասու մարմինների միջոցով, հարկային օրենսդրության պատշաճ կադրումն ապահովելու նպատակով միմյանց փոխաջակցություն են ցույց տալիս՝

հարկային օրենսդրության խախտումները կանխելու եւ խափանելու գործում,

իրավաբանական ու ֆիզիկական անձանց կողմից հարկային օրենսդրության պահպանման մասին աջակցության վերաբերյալ հարցապնդումով կամ նախաձեռնության կարգով ինֆորմացիա տալու գործում,

ազգային հարկային համակարգերի եւ հարկային օրենսդրության ընթացիկ փոփոխությունների մասին ինֆորմացիա տալու գործում,

հարկային մարմինների աշխատանքն ապահովող կոմպյուտերային համակարգերի ստեղծման եւ գործելու մեջ,

հարկատուների եւ հարկային մարմինների հետ աշխատանքի կապակերպման հարցում, ներառյալ մեթոդական հանձնարարականների մշակումը հարկային օրենսդրության պահպանման վերահսկողություն ապահովման վարաբերյալ,

կադրերի ուսուցման եւ մասնագետների փոխանակման բնագավառում,

այլ հարցերում, որոնք պահանջում են համապեղ գործողություններ:

Սույն համաձայնագրի դրույթները չեն խոչընդոտում իրավասու հարկային մարմինների համագործակցությանը Կողմերի միջեւ կնքված այլ համաձայնագրերին համապատասխան:

Հոդված 3

Աջակցության վերաբերյալ հարցապնդման ձեւն ու բովանդակությունը

Աջակցության վերաբերյալ հարցապնդումն ուղարկվում է գրավոր՝ կցելով քննարկման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Արտակարգ իրավիճակում հարցապնդումը կարող է արվել բանավոր, այնուհետեւ գրավոր աջակցության վերաբերյալ հաստատելով հնարավորին չափ կարճ ժամկետներում:

Աջակցություն ցույց տալու վերաբերյալ հարցապնդումը պետք է ընդգրկի՝

հարցապնդող հարկային ծառայության անվանումը,

հարցապնդվող հարկային ծառայության անվանումը,

հարցապնդման նպատակն ու պարճառը,

այն հարկապուրի անվանումն (անունն) ու հասցեն, որի նկարմամբ արվում է հարցապնդումը;

Հարցապնդման էության եւ դրա հետ կապված իրավաբանական հանգամանքների հակիրճ շարադրանքը, նշելով քննարկվող ժամանակահատվածը եւ հարկի կոնկրետ փասկները;

Հարցապնդումը պետք է արվի ռուսերեն կամ հայերեն; Կողմերի խնդրանքով ներկայացվող նյութը կարող է թարգմանվել ռուսերեն կամ հայերեն;

Հարցապնդվող հարկային ծառայությունն իրավունք ունի պահանջելու լրացուցիչ տեղեկություններ աջակցության վերաբերյալ ստացված հարցմապնդման մասին:

Հոդված 4

Աջակցության վերաբերյալ հարցապնդումը կատարելու կարգը

Իրավասու հարկային մարմինները միմյանց աջակցություն են ցույց տալիս ազգային օրենսդրությանը համապատասխան եւ իրենց իրավասության սահմաններում:

Հարցապնդող հարկային ծառայությունը կարող է իր խնդրանքով ծանուցվել աջակցության վերաբերյալ հարցապնդման կատարման համար իրականացվող գործողությունների անցկացման ժամանակի եւ տեղի մասին, իսկ նրա ներկայացուցիչները ըստ լրացուցիչ համաձայնության կարող են ներկա լինել դրանց կատարմանը:

Եթե աջակցության վերաբերյալ հարցապնդումը չի կարող կատարվել հարցապնդվող հարկային ծառայության կողմից, նա հարցապնդումն ստանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում այդ մասին գրավոր ծանուցում է հարցմապնդվող հարկային ծառայությանը՝ նշելով աջակցություն ցույց տալու մերժելու պատճառները:

Հոդված 5

Տրվող ինֆորմացիայի բովանդակությունը

Իրավասու հարկային մարմինները սեփական նախաձեռնությամբ կամ աջակցության վերաբերյալ հարցապնդումով միմյանց ինֆորմացիա են տալիս հետևյալի մասին.

ձեռնարկությունների, դրանց մասնաճյուղերի եւ ներկայացուցչությունների գրանցման, ներառյալ՝ գործելու վայրի, ենթակայության, սեփականության ձևի վերաբերյալ եւ այլն.

իրավաբանական ու ֆիզիկական անձանց կողմից պետական ու առևտրային բանկերում հաշիվներ բացելու, ինչպես նաեւ դրանցում դրամական միջոցների առկայության ու շարժման մասին.

տվյալ կողմի տարածքում իրավաբանական ու ֆիզիկական անձանց ստացած բոլոր փեսակի եկամուտների եւ հարկման օբյեկտների, հարկերի վճարված գումարների եւ հարկման հետ կապված այլ հարցերի մասին:

Հոդված 6

Փաստաթղթերը եւ մյուս նյութերը ներկայացնելը

Հարցապնդվող հարկային ծառայությունը ըստ աջակցության վերաբերյալ հարցապնդման ներկայացնում է նորմատիվ ակտեր, փաստաթղթերի վավերացված պատճեններ եւ այլ նյութեր, որոնք անհրաժեշտ են հարկային հետաքննության կատարման համար:

Փաստաթղթերի կամ այլ նյութերի օրինակները կարող են պահանջվել այն դեպքում, երբ վավերացված պատճենները հետաքննության համար բավարար չեն:

Փաստաթղթերի եւ մյուս նյութերի հանձնվող բնօրինակները պետք է վերադարձվեն համաձայնեցված ժամկետներում:

Նյութերը կարող են ներկայացվել կոմպյուտերացված ինֆորմացիայի ձեւով՝ լրացուցիչ տալով այդ նյութերի մեկնաբանման համար անհրաժեշտ օժանդակով ինֆորմացիա:

Անհրաժեշտության դեպքում մի կողմի հարկային մարմինները իրավաբանական եւ ֆիզիկական անձանց՝ մյուս կողմում հարկման համար պահանջվող փաստաթղթերը վավերացնում են առանց վերադաս հարկային մարմինների հետ լրացուցիչ համաձայնեցնելու:

Հոդված 7

Ինֆորմացիան հաղորդելու կարգը

Աջակցության վերաբերյալ հարցապնդումները, փաստաթղթերը, նյութերը եւ այլ ինֆորմացիան հանձնվում են կողմերի համաձայնությամբ որոշվող կարգով:

Աջակցությունն իրականացվում է այն պաշտոնատար անձանց ուղղակի կապերի շրջանակներում, որ որոշում են իրավասու հարկային մարմինների ղեկավարները:

Հոդված 8

Գաղտնիության պահպանումը

Կոնկրետ հարկապտույններին վերաբերող ինֆորմացիան համարվում է գաղտնի եւ ապահովվում է պաշտպանության ռեժիմով՝ հարցապնդվող հարկային ծառայության պարանջներին համապատասխան:

Սրացված ինֆորմացիան կողմերի կողմից կարող է օգտագործվել միայն սույն Համաձայնագրով նախատեսված նպատակներով, այդ թվում նաեւ վարչական կամ դատական քննության համար:

Այլ նպատակների համար ինֆորմացիան կարող է օգտագործվել միայն հարցապնդվող կողմի համաձայնությամբ:

Հոդված 9

Համաձայնագրի կապարումը

Առթիվերը կձգվեն փոխհամաձայնության հասնելի վրանից հարցերի կարգավորման գործում, որոնք կարող են առաջանալ սույն Համաձայնագիրը մեկնադրանելիս կամ կիրառելիս:

Անհրաժեշտության դեպքում կողմերը կխորհրդակցեն սույն համաձայնագրի իրացման գնահատման եւ նրա մեջ փոփոխությունների կապարելու նպատակահարմարության շուրջը: Խորհրդակցելու ժամկետները լրացուցիչ որոշում են կողմերը:

Սույն համաձայնագրի դրույթների իրացման նպատակով կողմերը կարող են լրացուցիչ համաձայնագրեր կնքել առանձին հարցերի վերաբերյալ:

Հոդված 10


Համաձայնագրի ուժի մեջ մտնելը եւ գործողությունը դադարեցնելը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից եւ դադարեցնում է իր գործունեությունը վեց ամիսը անց՝ սկսած այն օրից, երբ կողմերից մեկը գրավոր կժանուցի մյուս կողմին նրա գործողությունը դադարեցնելու մտադրության մասին:

Կնքված է Մոսկվա քաղաքում, 1994 թվականի մարտի 11-ին երկու բնօրինակից, յուրաքանչյուրը ձուսերեն եւ հայերեն, ընդ որում երկու տեքստերն էլ համապոր են:

Հայաստանի Հանրապետության


կառավարության կողմից



Ս. Սահակյան

Ռուսաստանի Ռազմության

կառավարության կողմից



Բ. Գրուսեյ